

ԽԱՐԵԼԱԿ

ՅԵՐԱՅՈՒՅՆ
ՇՈՑՊՈՐՏՈՅՑ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒՆԻՍԻ 18 -ին. Թիֆլիս. №25

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ

—Ձերդ մեծութիւն, շնորհիւ երիտասարդ քաղաքիս «Միութիւն» և Յառաջադիմութիւնն կուսակցութեան, դրութիւնը մեր երկրում այնչափ լաւ է, որ ամենքն էլ կրննց չալալ աշխատավարձն են ստանում. մեր երկրում մեզր, կաթ ու արիւն է ծորում:



Օ. Կ. ՇԱԼԻՆՍԻ

Я.Т.С. Быхова

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ՄԱՔԱԲԱԼԱ

VI Տարի

Երզիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ


Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զրկիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտական համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթըն ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի: Հասցէն՝ Тифлиς Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայանցան



«ԽԱՔԱԲԱԼԱ»

Բ Ա Ք Ա Ե Գ Ի Ն Ե Լ Ա

Տարեկան	5 ը.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐԶԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ը.

Տարեկան	12 ը.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղչ:

Ձրի կարգացողներին պէտք է նկատենք զլիսիվայր:

«ԽԱՔԱԲԱԼԱ» ՕՐԱՅՈՅՑԸ

1911 ՅՈՒՆԻՍ 30 օր

18

Суббота ՀԱՌԱԹ Զայտոն Լուսնի 6

19 (կեր) Յիշատակ համագումարին ուսուցչական միութեան, որ ի մեծադողող ժողովաց իւրոց որոշել է յառաջիկայ աշնանէն մոզական զբաղանաւ և բազմաթիւ յանձնաժողովաւ իւրով շրջափառ դպրոցս հայոց վերածել զաշտի-սանդալի:

20 (բ. 2.) Անուանակոչութիւն ժառանգաց հարուստ մեծամեծաց, որք յետ մահուան ծնողաց իւրոց լուսն ի մէջ ծովուց դրամի և այնպէս նային ազգային հիմնարկութեանց, որպէս հողաբարձուք դպրոցաց հայոց:

21 (դ. 2.) Տօն սրբոց արիւստավաճառաց անիւբաւեց, որք 1000 աղիւսին փոխանակ 12 ը.՝ վաճառին 24 բուրբիւր և առիթ տան յայժմ քնած ու պրաւայի զբաղցր բուն խանդարել:

22 (դ. 2.) Յիշատակ մեռելոց քահանայից մերոց մի քանիսաց, որք զինչ ասին բանիւ կատարին և գործով: Այսպէս՝ թէ և զմտղուկս քամին և զուխտս կլանին, բայց թէ ասին խօսքով «առէք կերէք» և զինքեանք գործով ցուցեալ՝ «առնեն և ուտեն»:

23 (ե. 2.) Շարժեղարձ յօրելեանին «Պաթաբալայի», որ կատարեցաւ ի մէջ ճանտարիս տյգին: Որք վրայ որպէս լսեմք հաստատ աղբերաց պարզորակաց, տէր ու տնօրէն նորա. Գասպարն խոստացեալ է ամէլ ամիս կատարել զայդպիսի յօրելեանական ճաշկերոյթս: Առաջարկեմ խաթաբալիստաց գատամս սրել և զիշտանս պահել:

24 (ուրբ.) Իսէր Հաւարբարի ժողովրդեան վասն մաքրելու և ջրելու դանթու փոշին Յիցեանօփակի պաղեմոմի և վասն արեւից պահպանելու հովանոց շնելու համար, Պատրիսովն վաղն մեկնեց ի Պետերբուրգ վասն այդորիկ զեկուցանելու մինիստրական խորհրդին: Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ Փարեմուզ

ՊԱ՝ՊԱ՝ՊԱ՝ՊԱ՝ ՊԱՆՏՕՆԱԿԱՆ

«Պաթաբալի» հնգամեայ տարեդարձի օրը, երբ ամենահանդիսաւոր ճաշէինք ուտում վերայի «Ճանտագիւ» այգում և փառաւորապէս ատամները գործածում, իսկ ստամոքսը զբաղեցնում ազգային այգ կարևոր խնդրով— ճաշով, — մեր կուսակցութեան կենտրոնական բիւրօն իր բոլոր մասնաճիւղերով հանդերձ, հետևեալ խորիմաստ և յոյժ կարևոր կարգադրութիւններն արեց, — որ և հրատարակում ենք ի զիտութիւն աշխարհի.

1. Խստիւ հրամայել Սուլթան Մահմէդ V-ին, որ անմիջապէս թողնէ Սալոնիկը և վերադառնայ Կ. Պոլիս:

(Ինչպէս յայտնի է հեռագրներից, Նորին Մեծութիւնը հապճեպ կատարել է մեր հրամանը և աճապարել է Կ. Պոլիս):

2. Կարգադրութիւն եղաւ, որ անգլիական թագաւորական զոյգը անպատճառ թագադրելի, որովհետև չենք կարող թոյլ տալ, որ արքան լինի առանց թագի:

(Ինչպէս այդ մասին էլ տեղեկացած կլինէք—այս հրամանն էլ կատարեց և Դէորդ V-ը Աստծոյ ողորմութեամբ թագադրեց):

3. Պատուէր տւեցինք Պիւլայի խանին, որ ամառը Կիւլափողսկում ապրի, ու կովկասեան հով կուլ տայ, քան

թէ տապակի իր երկրի սօթ ու պապակում:

(Նորին Բարձրութիւնը արդէն ամառանոց է վարձել Կիւլափողսկում):

4. Պարսկաստանի Սեփեհզարին խըստիւ ու խիստ պատւիրեցինք—մի ոտնաթափով չհեռանալ Ռաշտից, եթէ չի ուզում մի մատ մեղր դառնալ:


(Նա նոյնպէս մեր հրամանը կատարել է և Ռաշտում նստած սպասում է մեր կարգադրութիւններին):

5. Որովհետև ամսիս սկզբներին բաւական անախորժ ցրտեր էր լինում և փնասւում էր արտ ու արօտայք, և թուլին ու բալին լաւ չէին հասնում,— խստիւ պատւիրեցինք պարոն Մակար Չմշկեանին հողմերը ցրել և արևին բերել ու այնպիսի զիրքով կանգնեցնել, որ այլևս ցրտեր չանի մինչև մեր առանձին կարգադրութիւնը:

(Այս հրամանը ճեպընթաց գնացքով կատարել է պ. Չմշկեանը, դրա համար էլ նրան շնորհեցինք ան ան... և... Իսմայիլ տիտղոսը):

7. Քաղաքագլուխ Ա. Պատիսեանի խոստովանութիւնը և սրտի արիւ-արիւլ լսելով հրամայեցինք անմիջապէս մեկել Պետերբուրգ և անդ սպասել մեր կարգադրութիւններին, իր սրտի թելադրութիւններին և խղճի խայթերին:

7. Ի նկատի ունենալով որ խաւեարը խիստ հակառակ է խօլերայի գոյութեան, պատւիրեցինք՝ ով որ խաւեար ուտել ուզէ, թող անուշ անէ:



8. «Փանտազիա» այգու, տէրերին շնորհեցինք լաւ ու հռչակաւոր այլև համով ճաշի համար եօթ լիտր «շնորհակալութիւն» իրա բմբուլներով:

9. «Սաթարալայի» ընթերցողներին թոյլ տւինք ապրել ինչքան քէֆներն ուզում է:

Ուրիշ մի քանի կարգադրութիւններ էլ արեցինք, բայց այդ այնչափ աննշան են, որ աւելի լաւ է կարգաք «Արարատ»-ում «Սինոզի օրագրութիւնից քաղածքներ»-ը:

Իսկականի տակ ստորագրեց՝
Նախագահ՝ Գասպար փաշա Կալատազով
Անդամներ՝ Եղոյ ծայրայեղ վարդապետ
Ճնդրիկ բեհեզբուղ արեղայ.
սադրագամ՝ Կլան Յակովբ
Ատենագիր՝
Տօմարագէտ աստղագէտ
Փարեմուզ

11-ն յուլիսի 1 թիֆլիս
ի վերա
ի բաղն «Փանտազիա»
ուրախ ժամու
«Սաթարալայի» գոյութեան
վնցերորդ տարին

անփուղ՝ անմունաթ ամէն բան կու շնորհիմ, ովոր ինչ ուզէ՝ կուտամ:

Միւր տէրտէրները մէկի համա վուր ասում ին թէ՝ Աստուծ հոքին լուսաւուրէ, էնչախնէլէթ ձեռքը դէմ ին դընում, էդ վուր ասինք, փուղ սու, կօսէ:

Իս էդ թաւուր խասիաթ չունիմ:
Իս մուքթա իմ բաժնում ամենքին էլ, ով ինչ ուզում է:

Մաշ:
Միլիօնիւր խօս չիմ բաժնում, փուղ խօս չիմ տալի, լաւ խօսք է էլի. լաւ խօսքի համա էլ փուղ գուզիմ:

Ֆիէ:
Էտէնց վուր փուղիւր ուզելով ման գանք՝ ով գիղի մէ տարում լաւ խօսքերու համա հարիւր միլիօն փուղ գաղիմ:

Հա, էն էի ասում:
Իս ասի կաթղկոսական գուրձերում մինչկի հիմի չիմ խառնել:

Լաւ կաթղկոսացունիւր իս էլի շատիւրը գիղիմ, համա վախում իմ, վուր նընդրինք ու նրանք էլ մեռնին:

Ի՞նչի ախպէր, ի՞նչի մեռնին. ումը ի՞նչ ին պակսեցնում. հօրէսի դէնը ուփրօ...

Լաւ մարթը վուր կաթղկոս ըլի ու մեռնի՝ լաւ կուլի՛:

Չէ:

Այ իս սեմիցն իմ պակաս. կաթղկոսացու, իստակ կաթղկոսացու մարթ իմ. բէխէր լաւ ունիմ, փուրս էլ վուր չինչ՝ զլաթով ու շնուրքով է. մէ քիչ միւրուք է պակաս, հէր օխնածնիւր, մէ լաւ միւրուք ունեցողից վուր փուղով ուզիմ՝ չին տոյ:

Կուտան, կուտան իս ու իմ հոքին, պարիկմախէր վարթանովին կու շինիլ տամ ու հետտի կաթղկոս կու զուգ գամ, վուր ձիւր հաւնածը:

Համա չիմ ուզում, չիմ ուզում, չունքի վախում իմ, մեռնիմ:

Կաթղկոս վուր ըլէի, գիղիք թէ ինչէր կօնէի՛:

Հայ հա՛—էդ բանիւրը, պլաննիւրը վուր հիմիկսէթ ասէի, խօս էլ լազաթը կու կորցնէր:

Ո՛վ գիղի, ուրիշներն էլ, էլաքի միւր Հաջի Համբարձումը ուզենար կաթղկոս դառնալ—ու իմ պլաննիւրը գուրձադէր. չէ ախպէր, իս իմ պլաննիւրը ոչովին չիմ ասի, չունքի սա էլ մէ սեկրէտ է. համա ձիւր կօսիմ թաքուն,

գէթաղայ դուք ոչովին բան չասիք:

Իս գիղիք թէ բաներ կօնէի, վուր վուր չինչ չանէի, Չէր մէ հարիւր-հարիւր թուսնիւր հայխումբագիւրներուն, կուտայի կու խոստանայի. նրանք հետտի կու գովէին, վուր օխար երկինքը կու բանձրանայի:

Սաւայի սրամէն հաս ու չհասի խնդիրքներու համա մէ նուր սինօթ կու մոգոնէի:

Ով սումը գուզէր, իս հրամանք կուտայի, վուր փասկէին:

Մէ բան վուր սրտնիւրը հաւնում է, տէրտէրները հասցնին չհասցնին ան թէ չէ՝ մէկը վուր մէկի հետ չի ուզում ապրի, ու սրանք մէկ-մէկու հիդ մէ գլուխ կուում ին, ի՞նչ իմ կորցնում—թուղ բաժնւին. վայ զարդիս, իս էլ ապահարգանի թուղթ կու տամ. թող քէֆ անին: Թէկի իրենք բաժնւած ին սրտով,—իս, ան իմ թուղթը քանի գրոշ աժիւրք:

Ամա իս էլ խօսքիւր իմ խարջում այ: Ակոր Գենջովին ափրակութենի կոնդակ կուտայի. սրան սագական բան է ու սրտի ուզածն էլ էն է:

Աղայով Դագարին Սեան կու զրգէի ապաշխարելու ու դասագրքիւրը նուր մէկանց «ու»-ով ան «վ»-ով փեչատելու:

Սեղրակ Մանգինովին շիւսփլաւ էփիլ կուտայի:

Մատթէուս վարթապետին հրաման կօնէի, վուր ինչ գիղէ չգիղէ իրա արած ուկիւրաներիցը՝ դուս գայ ու մէյդնի ան գորողակօյ տան աղաքը ամենքին պատմէ:

Թող խալիւր իմանայ, խիւք սովրի:


Էլի շատ բանիւր կօնիմ ու լաւ լաւ բանիւր. մագրամ վախում իմ տխպէր վայ թէ նընդրելիմ ու մեռնիմ:

Ի՞նչի մեռնիմ է:

Ձիւր խարջի մէչ ի՞նչի գցիմ:

Ուփրօ լաւ է էսպէս ըլիմ, ու էդու համա էլ էսօրւանից այդնում իմ, վուր իս իմ կանգիտատուրէն հանում իմ. իս չիմ ուզում կաթղկոս ըլի:

Խաթարալա ամենայն հասց
Գասպար Կալատազով





—Հարեաննե՛ր, ինչո՞ւմ եմ, դուք էլ նազեք, մի գուցէ մեր միահամուռ երաժշտութիւնը, ուրիշ խօսքով նօտան՝ ազդէ երիտասարդ թուրքերին եւ սահմաններս լայնացնեն.—Ալբանիայի կողմերում.

ԳԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դնկոզնիտո.— Թիֆլիս ժամանեց խաթա-
բալիստների մայրաքաղաքում տիկին Գե-
զալ Ադաբաջին, որին երկաթուղու կայա-
րանում հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց
տւին:

Ամենից առաջ, գնացքը կանգնեցնելուց
անմիջապէս, տիկնոջ վագոնը մտաւ նապիւ-
շիկը № 97-ը և հարցուբարև անելուց յետոյ
առաջնորդեց վագոնից դուրս գալուն:

Քաղաքագլուխ Սատիսեանը կայաբանի
աստիճանների վրայ մի զգացւած և սիրա-
բորբոք ճառ խօսեց. նկարագրելով թէ քա-
թառնները և քաջալնները ինչպէս են սիրա-
հարում:

Այնուհետև Զարարը երգեց.
«Въ любви веѣ возрости покорны»
սէքէնադը և յետ այսօրինակ տրամաւայ նըս-
տած հանդիսաւոր մուտք գործեց քաղաքի
փողոցներով—երևանեան հրապարակ:

Այստեղ ճաշին աղ ու հաց կերաւ և հան-
գատանալու համար մտաւ իր համար յատ-
կացւած պարտամենտ-դեպարտամենտները:

Սրա Թիֆլիս գալուն քաղաքական մեծ
նշանակութիւն են տալիս:

Կարծում են, որ Թուրք-չեքոսլուաքական
պատերազմը զոնէ այսօր կամ վաղը չի
լինի:

ՀԵՆԼԱՐԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, ամսիս 12-ին, Հաւարարի «Նոր-
Իրամա» թատրոնում բարեհաճ մամաւկցու-
թեամբ կօնսիստորիայի աւագ ծառայ Պե-
տոյի և անբարեհաճ անկեղծութեամբ քնա-
ցեալ սիրողների ներկայացուց «Անիի կոր-
ծանումը» պատմական դրաման 5 գործողու-
թեամբ և 8 լուսանկարով:

Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր. թատ-
րոն սիրողները չէին մոռացել բերել մինչև
անգամ բարուրում փաթաթած ծծկեր մա-
մանուկներին:

Թատրոնի օթեակները և առաջին կարգե-
րը բռնել էին կօնսուրբօրներին բիծաները և
սիրողների մամիդաները:

Գիշերւայ ժամը 9-ից մինչև 2-ը մենք
մտքով թուել էինք պատմական Հայաստան
և կոկոսացող ազուանների նման դերասան-
ների հետ սաւառնում էինք Անիի աւերակ-
ների չորս կողմը, թէև մեր մարմինները
սարսափելի սոթից տապալում էին Սա-
րագեանի բաղնիսում:

Սաղի սկզբին պ. Բաղդասարեանը յայտ-
նեց հասարակութեան թէ Ս. Դոշոյեանի
Զինաստան մեկնելու պատճառով կաթողի-
կոսի դերը յանպատրաստից կրկատորի Ան-
տոնեանը:

Եթէ դա ճիշտ է, աֆարք տղայ, շատ
լաւ տարաւ իր դերը, կեանքի մէջ անգամ
մենք այդպիսի կաթողիկոս չենք ունեցել:
Նրա փառայեղ միքուքն անգամ վկայում
էր այդ բանը:

Միայն պէտք է խոստովանել, որ այդ
գիշերային կաթողիկոսը երեք պակասութիւն
ունէր. այդ այն էր, որ նախ նրան դերա-
կատարները «Վեհափառ տէր» ասելու փո-
խարէն «տէր-հայր» էին կանչում, երկրորդ,
վեղարի կաթողիկոսական խաչը Դոշոյեանը
սխալմամբ տարել էր Զինաստան և երրորդ,
կաթողիկոսական փարաջան, որ ինչպէս
լսեցինք, բերել էին տեւել Սիխոյի ժամից,
այնքան կարճ էր, որ կաթողիկոսի շալ-
ւարն անգամ երևում էր մինչև ծնկները
և եթէ նրա վեղարը չլինէր, երևի Իմբրէթի
մէջուրէն բէհեսաբ կանէր դրա առաջ:

Երբ երկրորդ գործողութիւնը վերջացաւ,
հանդիսականները, որոնց թւում և ես, ու-
զեցինք դուրս գնալ կարիգօրի կարծեցեալ
մաքուր օդը ծծելու, մեզ յայտնեցին թէ՛
«տեղները նստեցէք և միք շարժել շուտով
պատկեր է լինելու»:

Այդ ժամանակ ես յիշեցի լուսահողի Պա-
րոնեանին իր «Մեծապատիւ մուրացկան-
ներով», ուրախացայ և կարծելով թէ շու-
տով լուսանկարելու ենք, բեխբիս մի
քիչ Ֆիքսատուրա քսեցի, գալստուխս, որ
նշելու ժամանակ ուսերս էր թռել՝ ուղ-
ղեցի և յետ նստելով սպասում էի վարա-
գոյրի բարձրանալուն և լուսանկարչի երի-
ւալուն:

Բայց ինչ լուսանկարչի, ինչ պատկեր,
դարձեալ նոյն կաթողիկոսը, նոյն խենթը,
որ այդ ժամանակ գործընկերս Ալէքօին էր
նմանում և միևնոյն իշխանները, որոնցից
մի երկուսը կասէիւր թէ Սալմաստից դուրս
արած համաշարիներ լինէին:

Կոստանեանը և Բաղդասարեանը առա-
ջինը Գագիկ թագաւորի, իսկ երկրորդը
Վահրամ իշխանի դերերը լաւ տարան: Կեց-
ցէ նրանք, որ ազգի համար բեմի վրայ
իրանց զոհեցին:

Վեստ-Սարգիս Շեկոյեանը թէև նոյնպէս
բաւարար չափով տարաւ իր դերը, սակայն
նա արժանի չէ գովասանքի և խրախու-
սանքի, քանի որ նա ամբողջ հասարակու-
թեան առաջ դաւաճանեց իշխաններին և
հայ ազգին:

Մի խօսքով էլ ինչ գլուխները ցաւաց-
նեմ, տրագեդիան շատ ուրախ անցաւ. ամ-
բողջ ժամանակ բոլոր հանդիսականները՝
բացի քնածներէից՝ ծիծաղում էին:

Կոնցերտը վերջացաւ գիշերւայ ժամը
2-ին:

Փարեմուզ

ԳԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ

Սաժակն ու Ատրպետը այն կարծիքն են
յայտնում, որ Շիրվանզադէի յօբելեանը
միջազգային կօնգրէսի նիւթ կարող է դառ-
նալ և թերևս բարդութիւններ առաջ գան
պետութիւնների միջև:

Ալէքսանդրեան այդու ծառայողները և
Թիֆլիսի Ժողովարանի շէյքարները մեր-
ժեցին տօնել Շիրվանզադէի 30-ամեայ
զրական գործունէութեան յօբելեանը, ո-
րովհետև յօբելեարը նրանց НА-ВОДКИ չի
տւել:

Պ Ա Կ Ա Ժ Տ Ե Ր Գ Կ Ի Լ Ե Գ

1. Զեւոնցներ

Կինը.— Սիրելիս, դու ինձ համար մե-
տաքսէ նոր ձեռի ձեռնոցներ պիտի գնես:

Մարդը.— Ինչի՞ց են պէտք ձեռնոցները,
երբ երկու ձեռքերդ էլ առանց այն էլ շա-
րունակ զրպանիս մէջն են:

2. Կիսակահագնիսում

— Թոյլ տւէք առաջարկել ձեզ, յարգելի
գրեմակ, ինձ հետ մէկտեղ ընթրելու:

— Մայրիկս ինձ խստիւ արգելել է նման
առաջարկութիւններ ընդունելը, բայց եթէ
ցանկանում էք սիրալիկ լինել ինձ հետ՝
ընթրելքի համար վճարելիք փողը ինձ
տւէք, ես ամենայն շնորհակարտեթեամբ
կընդունեմ այն:

3. Թիֆլիսցի

— Իուք ինձ հաւատացնում էք, որ սրա-
նից 25 տարի առաջ Թիֆլիս էք եկել ոտ-
քով ու պատառտուն կօշիկներով... Իս
ինձ սկի էլ չի զարմացնում: Ես միանգա-
մայն մերկ եմ յայտնել Թիֆլիսում:

— Ի՞նչ ես ցանցառ-ցանցառ խօսում:
— Հաւատացնում եմ, անկեղծ եմ ասում,
որ դա ճշմարիտ է: 25՞ որ ես Թիֆլիսումն
եմ ծնել:

4. Ընօսնածք

— Ասէք, տեսնեմ, ի՞նչպէս էք հաւանում
իմ նշանածին:

— Սկզբի համար— վատ չէ:
Համայնացրեց
Նզուպ ծայրայեղ վարդապետ

ԳՆՆՁԵՎԻ ՓՈՒՆԳԵՐՉ ՎԵՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԳՀՆՆՈՒՐ ԺՈՂՈՎ

(Շարունակութիւն)

Փոքր ընդմիջումից յետոյ:
Մեծի Կիրակոս.— Բանկի կառավարիչ
Համբարձումի ոռճիկը չպէտք է աւելացնել...
նրա ստացած ոռճիկը, հինգ իրեն նման,
կառավարիչ արժէ...— Ընդհակառակը պէտք
է ոռճիկը պակասեցնել, որ բանկը թողնի,
ու գնայ, իր փողերը սուկոսով տայ...

Կստալ. Համբարձում Մեծի.— Չմբանին
եղեցէք, ինձ հաւան չի, ու համարաբա-
նական կառավարիչ է ուզում... Հէնց իմա-
նում է, թէ ես էլ, բանկի գլխի պրտեմ
ուտիլ, ինչպէս ինքը կերաւ Գինդորձական
ընկերութեան գլխի... Ես ոչ թէ միայն
բանկի փողերով եմ օպերացիաներ կատա-
րում, այլ և իմ փողերս եմ բանկի «անու-
նով» խօզ անում.— օբիւնակ. ես, եղբայրքս
և ամօղիներս, Գանձակի «տուղբերը» ենք,

*) Տես «Սաթարալա» № 24.

և բան ու գործ... Թողած, հէնց միայն ի սէր... Ժողովրդի, տոկոսով, փող ենք տալիս, որ նրանք ապրեն... Երբեք եմ Գասպար Կալատուզի անունովը և մաքրակրօն Գարօյի գլխովը որ եթէ մենք Գանձակում չլինենք, այստեղ, ոչ արև կըծագի, ոչ էլ օդ և ոչ լոյս կըլինի...

—Պէտք է ստել, որ այդպէս հաւատացած են Գանձակի տխմարագուխներին շատերը...

Պատահում է որ «ապահով» մարդիկ մուրճակներ են բերում զեղջերու, ես բանկի փողը Թողած իմ անձնական փողերիցս եմ տալիս... Իսկ վճարի օրը, նրանց յայտնելու համար, բանկի անունով տպագրւած «ПОВЕՏКА»-ն ՅԱ «Бухгалтера» ստորագրում եմ և ուղարկում, վճարելիս կասիրը, բանկի անունով, նրանցից փողը՝ ձախ ձեռքով ստանում է, իսկ աջով ինձ տալիս... Ծղարիտն ասած մեր կասիրը хороший малый ինչ ասում եմ, սուս ու փուս լսում է, ոչ թէ հաշուապահ Գարեգինի նման, «նամարդութիւն» է անում, ու ֆօրէրի 1000 ր. մուրճակին ՅԱ КОМИССИИ 2 ր. 50 կոպ. օրդեր է գրում, ու յետոյ, ինձանից պահանջում... Ելի, ինչի կառավարիչ եմ, ես, որ իմ մուրճակներին էլ պէտք է, «ՅԱ КОМИССИИ» պահանջեն... Մի բանի անգամ, ձրի անց կացրի, յետոյ մի օր, Գարեգինը ասեց. послушай «Амбарцумъ» «Ինչու ես,

այն ջրհորի մէջը թքում, որից ամենքս էլ ջուր ենք խմում»... (բայց խօսքը մեր մէջ մնայ, դուր էր ասում), մախլաս... կարող է պատահել, որ «Խաշփուշի» մէկը, ինձ կամ «մերոնց» վաղուց փող պարա լինի և չկարողանայ տալ... Եւ նա ուրիշ, անհրաժեշտ կարիքների համար, հաղար մի մուրճակով, յաջողեցնի բանկիցը փող ստանալու, և այդ յայտնի... մերոնց...

Բնութիւնից խելագուրկին, Պետերբուրգը և Մոսկւան ինչ օգուտ... Գեւ 30 տարի առաջ... իսկ հիմա ինչանցու են... մեր համալսարանականները... Օրւայ մի 1/4-ըը, թրև են գալիս փողոցներում, երկու քառորդը «շանտեկիոր», նոր մողա, շարւար հագած, «մամզէլների» հետ «բանդէտ» են նշանակում ու նրանց գրաղեցնելով են ժամանակ անցկացնում և դեռ չեն էլ կարողանում, մի կարգին «կաւալերութիւն» անել, և վասն «ГРУБЫЙ»-ութեան համար միշտ նկատողութեան են արժանանում մամզէլների կողմից... Կարդալու և բան սովորելու համար նրանք ժամանակ չունեն և այդ պատճառով ոչինչ էլ չգիտեն և ոչ թէ բանկ, այլ 15 երկոտանիների էլ, չեն կարող վարել... Կըլինեն մարդիկ, որ վերը յիշածներս, կըհամարեն «ПОДЛОГ» կամ սրա նման մի բան, բայց մեր խորհրդի անդամները «համալսարանական» Ա-

ղաջան Վարթագարիչի գլխովը Գասպար, գանջեմարի քննել են ու հետեւաւ եղբայր կացութեան են յանգել «Մինդար ալթի աներ»... Յարգոյամեծար ժողովականներով ոտքերի առաջ գայս ամենը, բարբառելով, աղերսում եմ, Մեծի վզակութիւն տալով, ժողովից դուրս անէք և ինձ նորից կառավարիչ ընտրէք...

Շայներ.—Մեծի դուրս, Մեծի դուրս...

Այս անգամ, հարայ-հրոցը, և տուր ու դրամփոցը, այնպիսի սուր բնաւորութիւն ստացաւ, որ տեսնողը կարծում էր՝ թէ գտնուում է Աւստրիական պառլամենտում, որտեղ չէիք, մաղեար և գերմանացի պատգամաւորները ազգայնական հարցի առթիւ, իրար գլուխ են պատռում: Միայն հոտած պամիդորն է պակաս, որ իրար քեակով տան:

Խաղաղութիւնից յետոյ

Բաղրամեան.—Կառավարիչ Համբօն լաւ մարդ է... և զոչաղ է... ի գուր Մեծին նրան հայւան չի...

—Թէ ես ծայրայեղներից ամենածայրայեղագոյնն եմ, և մեր տղերանցից 20 տարի առաջ եմ ձնդրիկ Արեղայից ծայրայեղութեան աստիճան ստացել... բայց ինչ արած Համբօն բուրժուա է և կրէգոս...

Իսկ գործնական կեանքի փիլիսոփայու-

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

«ԽՈՒՄԱՐԱՎԵՐ» ԅՕՐԵԼԵՆԵԿԵՆ ԸՆՇԿԻՐՈՅԹԸ ԹԻՓԼԵՍՈՒՄ

Շարաթ, 11-ին յունիսի կուզիան Միխօի այգում կայացաւ «Խաթարալայի» հնգամեայ գործունէութեան յօրելեանը: Թէ և այդ մասին պաշտօնական յայտարարութիւններ լոյս չտեսան, բայց և այնպէս, երևում է, խաթարալիստները ազիտացիան մեծ յաջողութիւն է ունեցել, որովհետև աշխարհիս ամեն կողմերից էլ շտապել էին շնորհաւորել խաթարալիստ կուսակցութեան հիմնադիր մեծ Խաթարալային: Զինաստանի Զին-չան-չուն-չինգ քաղաքն անգամ յետ չէր մնացել դրանից:

Առաւօտից ամբողջ քաղաքը զարդարւած էր գրօշակներով: Մարդիկ իրարանցման մէջ էին և դէս-դէն վազելով աշխատում էին տոմսակներ ձեռք բերել: Յօրելեանի օրը տոմսակի գինը բարձրացել էր մինչև վաթսուս աստիճանի: Այգու մէջտեղը կառուցւած էր մի գեղեցիկ բնա ելեքտրական գոյնզոյն լոյսով զարդարւած:

Վարագոյը երբ բարձրանում է յօրելեար Խաթարալային կոնարոնուկ առաջ են բերում մեր ծերունագարը «Մշակ»-ը երիտասարդ «Սուրհանդակ»-ի հետ միասին և նրատացնում են Անգլիայի Լորդերի պալատից բերել տւած ականակուռ, փափուկ բազկաթոռի վրայ, իսկ իրանք անձնագոր շաթիրների նման կանգնում են յօրելեարի աջ և

ձախ կողքերին: Բեմի վրայ են գտնուում մօտ 3000 պատգամաւորներ իրանց կանանց և երեխաների հետ, որոնց մէջ իրան բացակայութեամբ աչքի էր ընկնում «Հորիզոն»-ը:

Բոլոր պատգամաւորների խօսացածները մենք այստեղ մէջ չենք բերել, այլ կըթւենք սուելի կարեւորները:

Յօրելիանական հանդէսը բաց արաւ Գասպար Կալատուզովը: Նա նախ կաբայի թիւերը վեր քաշեց, բխիւրը սրեց, բուխարի փափախը դրեց կւան տակը, չիբուխը երկու երեք անգամ կրից մախորկի պատուած քիսան, լցրեց): Նախախը խփեց, վառեց, հազաց և ապա փստացնելով սկսեց հետեւալ կարճ, հաստ և աղբու ճառն ասել:

«Միտելի յօրելեար, շատ ուրախ եմ, որ այսօր պատիւ եմ ունենում ես, իբրև յօրելեանական յանձնաժողովի պատուաւոր նախագահ, բանալ այս յօրելեանական հանդէսը, շնորհաւորել քո բեղմնաւոր գործունէութեան հնգամեակը, կամ ըստ հին տօմարի քսանհինգամեակը, և ցանկալ ուժ ու կարողութիւն առաջիկայում էլ այդպիսի եռանդով գործելու:

Ես առանձնապէս քո կատարած գերի մասին կըխօսեմ երեկոյեան, երբ կանաչազարդ ծառերի հովանու տակ կըլսմեմ թանկագին կենացը. իսկ մինչ այդ, ի նշան իմ անկեղծ խօսքերի, թոյլ տուր մի պոօշտի անեմ քո վարդազոյն այտերիդ»: (Համբուրւում են: «Գասպար» լաւում է հանդիսականների միջից): Այստեղ միջանկեալ մի նկատողութիւն

պէտք է անեմ Գասպար Կալատուզովին:

Իմ անհատական կարծիքով այդպիսի յօրելեանական հանդէս բանալիս՝ տարրական քաղաքավարութիւնն պահանջում էր՝ նախ փափախը թողնել դուրսը և երկրորդ՝ ճառը ասելիս չիբուխը կրիսիլ գօտիկի արանքը. այն ինչ պատուաւոր նախագահը մեզ անպատիւ արեց օտարների առաջ և չիբուխը փստացնելով համբուրելիս քիչ էր մնում, որ չիբուխի կոթով յօրելեարի ձախ աչքը հանէր: Յոյս ունենք, որ Խաթարալայի տասնամեակը տօնելիս Գասպար Կալատուզովը այդ բանը ի նկատի կունենայ:

Գասպարից յետոյ, առաջին խօսողը լինում է երիտասարդ թուրքերի օրինաւոր ներկայացուցիչ՝ Աբդիւլ-Համիդը, որը բռնութիւն անելով քթածակեցրը և իր հօր խէրին փոշտալով, պսոււ է հետեւալը.—

«Անգին յօրելեար, Ալլահը վկայ է, թէ իմ թագաւորութեան ժամանակ ճրքան բեղ սիրում էի: Հայ ազգը քեզ է պարտական, որ թուրքիային տւի սահմանադրութիւն և որ իմ յաջորդ երիտասարդ թուրքերը շարունակում են իմ սկսած ճանապարհս:

Թող Ալլահը արժանացնի քեզ Մուհամմէդի յաւիտենական դրախտին և հնարաւորութիւն տայ քեզ այդտեղ հուրիների հետ քաղցր ժամանակ անցկացնելու...»:

Այստեղ արտասուքը խեղդում է Աբդիւլ-Համիդին և նա, մոռութը կախ արած, ճառը կիսատ է թողնում, որովհետև հուրիներ ասելիս նա յիշում է իր նախկին հարեմը:

Աբդիւլ-Համիդից յետոյ առաջ է գալիս Թիֆլիսի քաղաքագլուխ Մատիսեանը և ի-

թիւնը և տրամաբանութիւնն ասում են.

—«Հայ կեանքում, ծայրայեղութիւնը, և կարմիրութիւնը», նրա համար է, որ «մարդիկ» գլխիները պահելու համար նրանով վեր բարձրացան...

—Մթթէ մեր տղերանցից շատերը, ապրելու, «գիրք» և սնունդ ստեղծելու համար չեն «մեր տղերք» դառել...

—Մթթէ, նրանք տիրելու և վեր բարձրանալու համար չէ, որ սնունդների տակ... սրան նրան... Ի վերին երեսուցէմ... են ճանապարհում... որ ինչ է իրենց առաջը մաքուր լինի:

Մախազ. Յով.—Պարոններ, ինչու էք իզուր վիճարանում, փառք Աստուծոյ, այստեղ բոլորէ էլ գիտակից մարդիկ էք և ուսն ուզէք, նրան կընտրէք...

Աղ. Վարթապարիչ.—Ճշմարիտ է. շատ գիտակից... լինելուց է, որ հարիւր տրամագծորէն իրար հակառակ խօսողներին էլ ծափահարում են և հաւանութիւն տալիս...

—Մախազ. Յով. Ամի.—Հայ քրիստոնեայ մարդիկ են, չեն ուզում ոչ ոքի քէֆի դիպած լինեն... դա «ալտրուիզմի» նշան է...

—Պարոնայք, անցնենք ընտրութիւններին: Առաջարկեցէք թեկնածուների անուններ...

Չայնեթ.—Աղաջան Վարթապարիչին և կառավարիչ Համբարձումին ցանկանում

ենք վեր-ընտրել, իրենց պաշտօնների համար... ով ցանկանում է, թող կանգնի...

—Բոլորը միասին կանգնում են և շատ «ցանկանալուց» «գլուխ-կոնձրի» են տալիս...

Աղաջ. Վարթապարիչ.—Ես ամենին չեմ... ուզում... վերընտրել և թեկնածութիւնս, չեմ գնում...

Կատով. Համբարձում.—Ես էլ Մեծի արևը... գիտենայ, հէջ չեմ... ուզում...

Բոլորը միասին.—Աղաջան ջան, աղաչում ենք, պաղատում ենք, ոտիդ տակը պահում ենք. առանց քեզ Գանջի ծառերի տերևները չեն շարժում, իսկ բանկը ամենին տեղիցը չի շարժել...

Աղ. Վարթապարիչ (խղճալով).—Ես թեկնածութիւնս կըզնեմ մի պայմանով միայն, որ իմ այսն այո լինի, և ոչն՝ ոչ—իմ կայացրած վճիռները, որոշումները, պէտք է անփոփոխ ընդունելն ընդհանուր ժողովի կողմից... (այսինքն, զոր ինչ Աղաջ. Վարթապարիչը գրեաց, զայն ոչ կարիցեն ջընջել, ոչ զընդհանուր ժողովսն և ոչ զամենայն Գանձակ ի գաւառով իւրով...):

Թաթում.—Դէ էնա, ասա անսխալական եմ էլի...

Աղ. Վարթապարիչ.—Ինչու Հոսմայ պապը, 500 միլիոն կաթօլիկների համար անսխալական կըլինի, իսկ ես, բանկի 200

անդամի համար, չեմ կարող լինել...

Պաւլ. Բերրուովիչ.—Փայլիկ Վարթապարիչ մին բան լաւ անցաւ... Ֆինիսի Վարթապարիչը ար առնելը... որ բանկի ծառայողները չայ խմեն... Չայնեթը չայնիխանից չայ բերելը ու խմելը ամօթ է, մեր բանկի անունի համար... դեռ ոչինչ, եթէ ծառայողները իրար հետ բարիչ են լինում և չայդանը գնում են «գալի» մէջ տեղը ու միասին սիրով չ. յ են խմում... բայց թէ խոսվին ու ամեն մէկը, մի-մի չայդան վերցրած, բանկի քիւնջերումը չայ խմի... Այդ էլ ոչինչ, եթէ բանկը մի քանի օթախներ ունենար, և այնտեղ ծածուկ չայ խմէին... որ բանկ մտնողները չտեսնան...

—Կատով. Համբարձում.—Ես ի սէր... մեր ժողովրդի, իմ օղուշաղովը, եօլա եմ գնում, նեղածք օթախներում, թէ ինչ է բանկն էլ իմ «գալի» մէջ եօլայ գնայ, որ իմ աչքի առաջ լինի... թէ և «գալին» մօտ 400 ր. քրէհ եմ ստանում և այդ փողովը կարելի է Գանջա 8 օթախ բռնել, բայց ինչ արած վախում եմ այնտեղ բանկի փողերը գողանան...

Ժողովականները ի նկատի ունենալով Աղ. Վարթապարիչի և կառավ. Համբարձումի ասածների «գոլտ» ճշմարտութիւն լինելը, նրանց գաղտնի քէտրկութեամբ վերընտրում են իրենց պաշտօններում: Իսկ Յով-

բան յատուկ ճարտասանութեամբ ասում է հետևեալ ճառը.

«Милостивый Государь Սաթարալա Գասպարիչ, ես էլ պատիւ ունեմ շնորհաւորելու քո յօրեկանդ Թիֆլիսի քաղաքի կողմից: Թիֆլիսի հայ հասարակութիւնը Սեզրակ Թառայեանի հետ միասին ի նշան իր անկեղծ սիրոյ և յարգանաց նւիրում է քեզ երկու տակառ սև և մի տակառ կարմիր ներկ, որը շուտով կըստացւի Մոսկուայից և որի նակլադնօյները №№ 00567 և 00568 ներկայացնում եմ ուղերձիս հետ միասին»:

Սաթարալանից յետոյ մոռացում է, թէ ում հերթն է խօսելու, այնպէս որ ամբողջ 10 րոպէ թէ պատգամաւորները և թէ մենք շփուած իրար երեսի էինք նայում:

Մէկ էլ տեսանք աչքերը տրորելով և քնակողով առաջ եկաւ Աթանաս Աշոտեանը և ասաց.—

«Ես ներկայացուցիչ եմ «Գիւղատնտես» շաբաթաթերթի կողմից: Գիտէք, ներդրութիւն, հերթը իմն է եղել, բայց սխալմամբ կուլիսում քնած եմ ֆնացել:

Գիտես, սիրելի յօրեկեար, կար ժամանակ որ մենք էլ իրար հետ շատ մօտ համփստներ էինք: Մեր տանը մի ուրախութիւն չէր լինի, որի թամազան դու չլինէր, կամ ընդհակառակը: Բայց ներկայիս մեր մէջը թէ ինչ սև կատու է անցել՝ ես չգիտեմ, այդ պատճառով ես հետևեալն եմ ասելու:

Սիրելի հանդիսականներ, ձեզ լաւ յայտնի է, որ ներկայ Գիւղատնտեսական ընկերութիւնը վերամկրտած է Տնայնագործական ըն-

կերութիւնից. ձեզ նոյնպէս յայտնի պէտք է լինի, որ նախկին Տնայնագործական ընկերութիւնը սապոնը որքան արժան գնով էր ծախում և ինչ գործուէութիւն էր ցոյց տալիս: Երբեք եմ Գալանթարի ազիզ արևով, որ եթէ ներկայ յօրեկանից գոյացած գումարը յատկացնէք Գիւղատնտեսական ընկերութեանը, դուք սխալած չէք լինի: Նա կըբացանի գորգագործական մի լաւ դպրոց, ինչպէս որ առաջներում բաց արաւ Ղուկականոյցներ, որոնք գործադուներ ի պատճառով տեղափոխեցին Ամերիկա»:

Այնուհետև մազերը սանդղելով առաջ է գալիս Յակովբ Գենջեանը:

«Պարոնայք, ես շնորհաւորում եմ հայ գրողների կողմից և խնդրում եմ, քանի որ հոնորար պահանջելու առաջարկս չանցաւ, առաջարկում եմ, ներկայ յօրեկանից գոյացած արդիւնքը յատկացնել հայ գրողներին, որի մասին ես վերջերս պարզ և ընդարձակ կերպով յայտնել եմ «Մշակ»-ում «Գծեր և ներկեր» վերնագրի տակ՝ Շիրվանդադէի յօրեկանի մասին խօսելիս»:

Դրանից յետոյ խօսում են զանազան ընկերութիւնների, դպրոցների և այլն հիմնարկութիւնների կողմից հազարաւոր մարդիկ: Կարգացում են մօտ 8000 հեռագիրներ, որոնց մէջ աչքի է ընկնում Տիգրան Նազարեանի և Անգլիացոց թագաւորի միասին ուղարկած հեռագիրը:

Բոլորից յետոյ ծանր ու բարակ վեր է կենում յօրեկեարը և յայտնում իր հետևեալ շնորհակալութիւնը.—

«Պարոններ և պարոնուհիներ. ես այնքան զգացած եմ ներկայ տօնախմբութեամբ և ցոյց տւած պատիւներով, որ հոգեպէս յուզւած՝ չգիտեմ թէ ինչ ասեմ: Անհուն շնորհակալութիւնս եմ յայտնում նախ յօրեկանական յանձնաժողովին, ապա Արդիւլ-Համիլին, որ պատիւ արեց իր կօմբօստօ քթով ներկայ լինելու յօրեկանիս: Շնորհակալութիւն եմ յայտնում Ա. Սաթարալանին և յոյս ունեմ, որ նւիրած սև ու կարմիր ներկերը կըգործադրեմ յօգուտ նւիրատուների: Շնորհակալութիւն Տիգրան Նազարեանին, Անգլիական թագաւորին և հայ հասարակութեան»:

Հէնց որ Սաթարալան ճառը վերջացրեց և ուզում էր նստի, ես ներս պրծայ ձախ դռնից և ասացի.—

«Պարոնայք, հէնցնոր մի հեռագիր ստացայ, որով ինձ ներկայացուցիչ են ընտրել յօրեկանական հանդիսին մասնակցելու Կարսի, Երևանի և Կ.-Պօլսի խաթաբախտները, ուստի...»: Սօսքս չլիքջացրած, մէկ էլ տեսնեմ՝ շրջակ, Արդիւլ Համիլը հասցրեց վզակոթիս և ասաց.—«ղուրումսաղ, նի՛ա օղ վախտնա դեմադն»:

Համէղի այդ հարւածի ազդեցութեան տակ ես թրխկացի և փուռեցի յատակի վըրայ: Հասարակութեան մէջ իրարանցում ընկաւ: Դրանց մէջ աւելի պարզ լսում էի կնոջս ձայնը, որ կողքիս հրելով գոռում էր.—«այ մարդ վեր կաց, բաց-բաց վայր ես ընկել, կըմըսես»:

Եւ իսկապէս վեր կացայ և ինչ տեսայ.— կէս գիշերին մահճակալից դուրսել, յատակի

սէփ ամին սևանում է թէ՛ նրա համար, որ նա քւէարկւեց գաղտնի... և թէ՛ նրա որ շատ ժողովներում նախագահելով ազատ... Ժամանակ չի ունենալ բանկի գործերով զբաղւելու...

Միւս ժողովը լինելու է մայիսի 22-ին, որի համար...

Զիպօ

Ե Կ Ա Մ Ա Յ...

Ես մի տենչալի Կարօտ լի ու լի...

Ես մի կենսալի Ծաղիկ բուրալի:

Ես միշտ ծով յարգւած, Սիրաշատ ապրած,

Ես միշտ խնկարկած Կուռք եմ մեծարած:

Ինձ միշտ գովում են Եւ փայփայում են,

Ինձ ճիշտ շոյում են Եւ համբուրում են:

Բայց չկայ մէկը, «Ա՛խ գոնէ չէկը»,

Որ կեանք խոստանայ Եւ ամուսնանայ

Ողջը անզգայ Կեղծ են, խաբերայ, Ողջ ինձ խաբել են... Խաբում են հիմա... Խնկթ



ԹԱՓՆՆԻ ՏԵՐԵԻՆԵՐ

1. «Զրնդուհւած օրինագիծ»

Պարոնը.—Իսկ դուք, օրիորդ, կըցանկանայի՞ք արդեօք երեխաներ ունենալ:

Օրիորդը.—Ես սրտանց կըցանկանայի, բայց, շատ ցաւալի է, որ այդ բանը օրիորդական աշխարհում դեռ չէ ընդունւած:

2. Ամուսնացայի գւարձութիւնների վիճակագրութիւն:

Table with 2 columns: Category and Value. Rows include: Յաճախորդներ սէզօսի ընթացքում—15,238; Ժամադրութիւններ . . . 127,314; Մասնաւոր լրտեսներ . . . 427; Կամաւոր վկաներ ապահարդանի ժամանակ . . . 21,718

էր «Սաթարալայի» հնդամեակը: Գասպար Կալատուզովը ցանկացել էր այդ 5 տարւայ ընթացքում «Սաթարալայի» աշխատակցողներին ի մի հաւաքել, որպէսզի իրար տեսնեն, թէ ինչ սփաթի մարդիկ են:

Ժամը 3-ն էր, արդէն հաւաքւած էինք «Փանտաղիա» այգու պատշգամբներից մէկում և շրջապատել էինք զանազան ուտելիքներով ու խմիչքներով զարդարւած երկար սեղանի շուրջ կողմը և սկսել էինք զանակ-պատառաքաններով կերակուրների ուժբակոծումը:

Այդտեղ էին Գասպարը իր երկար բիսիւրով, Ատրպետը կաթողիկոսական միւրուքով, Նար-Գոսը վարդապետական փորով, աստղագէտ Մակարը, կրօնամուկ Եզոպ ծայրայեղ վարդապետ, «Սաթարալայի» կնքահայր և կուսմուշկա Օ. Շլինգն ու Գրիմը (Բօտտերը այդ օրը բաղնիս էր գնացել), բօյախանչի Բըխովը, Կլան Յակովբը, քէֆից փախչող Գար-Միրը, գրաշարների ձեռքից էրված խորոված Արմենակը, գրաշարապետ և զինի չսիրող Լաշքարը, «Սաթարալայի» գրաշար հաստիկ Մարգիսը և օրացոյցագէտ Փարեմուզը: Իսկ Լալայի Մարգարը, Գեօզալ Աղաբալին, Տմբալի Սաչանը. իսկ միւս խաթարալիսանները հարաւորութիւն չունենալով ներկայ լինել այդ համախաթարալայական ածնախմբութեանը, ուղարկել էին իրանց պատկերները:

Գաղտնի քւէարկութեամբ թամազայ ընտրւեց Ատրպետը՝ աշակից ունենալով ինքնակամ ինքնակոչ Մակարին:

Հացկերոյթը սպասածից շատ ուրախ անցաւ, երևում էր, որ բոլորն էլ իրանց դե-

3. Կարդա՛ւ եւ մի՛ գոչարկու՛ր (Հաւուածներ մի գործակալութիւնի կողմէն)

—Գողը դրամարկից փող գողացաւ... Բողարթմեանը տեսաւ... չգարմացաւ:

—Ազնիւ գործակաւտարը 10—20 հազարը ձեռքին՝ մի կողմ իսկ վերցնելը մտքով չանցաւ... Բողարթմեանն այդ բանից խիստ զարմացաւ:

—Գողերն ու ծոյլերը մնացին, գործունեայ, բանխոաց ու մաքուր ձեռք ունեցողին հեռացրին... Բողարթմեանին ճանաչողներն այդ բանը տեսան... բոլորովին չզարմացան:

4. Ռուսական առածներ

—Սէրը հրդեհ չէ, բայց եթէ վառւի— դժւար կըհանգչէ:

—Օրը գովիլը— իրիկա պահուն, իսկ կեանքը— մահուան ժամուն:

—Սիրտ ունեցողը բամբասանքից չի վախում:

—Ոչ թէ տարիքն է ձերացնում մարդուս, այլ վիշտն ու հոգսերը:

—Այն ոչխարների հօտում, ուր համաձայնութիւն կայ՝ գայլը զարհուրելի չէ:

Համայնացրեց՝ Եզոպ ծայրայեղ վարդապետ

վրայ եմ ընկել, իսկ բոլոր վերե պատմածները տեսել եմ քնած ժամանակ՝ երազում:

Առաւօտը վաղ վեր կացայ և շտապով գնացի օրացոյցագէտ Մակար Չմշկեանի մօտ օրացոյցին մտիկ անելու համար, պատմեցի վերոյիշեալ երազի մասին և խնդրեցի մի բացատրութիւն տալ, որովհետև Արդիւլ-Համիդի հարւածը ինձ վրայ շատ վատ տպաւորութիւն էր թողել:

Մակարը լսելով այս բոլորը, միբուրի տակին ծիծաղելով ասաց.— «Երազը, առհասարակ, ծանօթ և պատահած մտապատկերների վերաբարտարութեան լուսանկարն է, և եթէ աստղագիտօրէն դատելու լինենք, ձեր տեսած երազը ոչ այլ ինչ կըլինի, եթէ ոչ փոփոխած ձևով կրկնութիւն՝ շաբաթ օրը «Սաթարալայի» հնդամեակի առթիւ «Փանտաղիայի» այգում տեղի ունեցած քէֆի: Այնպէս որ՝ երազը ի բարին կատարեցի:

Մակարի այս բացատրութեան վրայ ես մի քիչ սրտապնդւեցի և ուզում էի շտորհակալութիւն յայտնելով դուրս գնալ, երբ անւայ առաջ ելաւ Մակարի բաշանաղ Չանչուլ Իւանիչը և խնդրեց պատմել թէ «Փանտաղիա» այգում «Սաթարալայի» հընդամեակի առթիւ ի՞նչ քէֆ է տեղի ունեցել:

Չանչուլ Իւանիչը աւելի պարզ լսելու համար ականջները բամբակը հանեց. այդ ժամանակ Մակարը պտուղած էր թախտի վրայ, իսկ ես էլ Մակարի արջին ու կէս երկարութիւնը աչքի անց կացնելուց յետոյ, ձէնս զլեցի և սկսեցի քէֆի համառօտ նկարագրութիւնն անել հետեւեալ ձևով.—

Ինչպէս յայտնի է, այս ամսին լրանում

բերումն էին: Եղան բազմաթիւ առաջարկութիւններ, որոնց թուում Օսկար Շլինգն առաջարկեց, որ խաթարալիսանների իրար մէջ մօտ յարաբերութիւն և կապ հաստատելու համար, լաւ կըլինի եթէ Գասպար Կալատուզովը գոնէ ամենաքիչը ամիսը մի անգամ այդպիսի խնջոյքներ սարքի, թէկուզ հէնց Օրթաճալի այգիներից մէկում:

Սակայն Գասպար Կալատուզով այդ միտքը իրան ձեռնտու չհամարեց պատճառ բերելով թէ Օրթաճալի էջի կամուրջից շատ է վախենում:

Այդ առաջարկութեանը Մակար Չմշկեանն էլ դէմ էր: Նա ասում էր, քանի որ իր առաջարկութիւնը ազգային հիւանդանոց հիմնելու մասին Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը չընդունեց, հետևապէս աստղագիտական օրէնքներով ինքն էլ չի համաձայնի Շլինգի առաջարկին:

Շլինգը տեսնելով, որ իր այդ առաջարկութիւնը ցանկալի հետևանք չի ունենում, յետ վերցրեց, քանի որ Գասպարը վախում էր էջի կամուրջից, Մակարը ազգային հիւանդանոցի հարցն է մէջ բերում, Նար-Գոսը զօւ է տալիս չխթմային, իսկ Ատրպետն էլ պիղծակը հանած, մատներով չափում է, թէ այդ մի քանի ժամայ ընթացքում փորն ինչքան է բարձրացել:


Մի խօսքով էլ ինչ երկարացնեմ, այդ խնջոյքը այնքան ուրախ անցաւ, որ քիչ էր մնում հարց բարձրացնէինք «Սաթարալայի» խմբագրութիւնը ամառը այդտեղ փոխադրելու համար:

Փարեմուզ



—Տեսի՛ր, տեսի՛ր բաական սիրուն աղջիկ է, մօրը ճանաչում էի ջեհիլ ժամանակ բարեկամ էինք սիրուն էր—աղջիկն էլ մօրը կրնամանի.

—Այո՛ սիրուն է եւ հաճելի է... արդէն ութ տաս տարեկան կրլինի. ժամանակ է դրանով գրադել:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի-ին Խ Ո Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն
Կ Ո Ւ Ր Ս Ե Ր

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-
ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնու-
սուցման համար. մօտ 1000 ընդհանուր
կերակուրների, խմիչքների, թխածք-
ների, կօմպօտի, մուրաբաների քաղց-
րեղենների և կարկանդակների և այլն:
300 երես խիտ սպազրած, գինը ճա-
նապարհածախսով վերադիր վճարով 2ր
60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնա-
ւոր կերպով տանել անայլին անտեսու-
թիւնը և պատրաստել անայլին համեղ
ու սննդարար ճաշ, միւր կոտորելու և
սեղանը դարդարելու մասին յաւելա-
ծով, մօտ 100 երես, նկարներով: Գինը
1 ս. 20 կ., երկու գիրքը միասին 3
ս. 35 կ. (կարելի է մարկաներով).
պահանջներով դիմել բացառապէս Յ.
Կ. Սետերս, Ս.-Սետերբուրգ, Սետեր-
բուրգսկ. տորոն, Բոլշոյ պրօսպ.
№56—609, 483 0—6
(Ե. հ. 2.)

ԲՈՂՈՐՈՎԻՆ

Ո՛ր ԶԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻԻԱՆԴՆԵՐԸ !!
Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրի-
պէրով, շանկերով, սեռական թուլու-
թեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայ-
քայլած է ծանախանութեամբ—պա-
հանջեցէք «Հանրամատչելի բժշկարան
գաղտնի հիւանդութիւնների տղամար-
դու, կանանց միզաստեղծական օրգաննե-
րի», նկարներով և բազմաթիւ ըն-
դհանրաներով մօտ 250 երես: Գինը ճա-
նապարհածախսով ու վերադիր վճարով
1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկա-
րան-ձեռնարկ», չափահասների և ամեն
տեսակ հիւանդութիւններ բժշկելու
համար, բացի գաղտնի հիւանդութիւն-
ներից, առանց բժշկի օգնութեան մօտ
400 երես. գինը ճանապարհած. վերա-
դիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիր-
քը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է
մարկաներով): Միակ պահեստը Ս.-
Սետերբուրգ, Սետերբուրգ. տորոն,
Բոլշոյ պրօսպ. № 56—609 Յ. Կ.
Սետերս 484 (Ե. հ. 2.) 0—6

40 օր! ՁՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք
սովորի ազատ խօսել, կարդալ և գրել
գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն
և լատիներէն նորագոյն մեթոդով կազ-
մած մեր ձեռնարկներով (ուրիշները
բեկլամ են),
ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ
Մի ձեռնարկի գինը ճանապարհածախ-
սով վերադիր վճարով արժէ 1 ր. 10
կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—
2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.:
Պատուէրները կատարում է միակ պա-
հեստը ամբողջ Ռուսաստանի համար-
Ս. Սետերբուրգ, Սետերբուրգսկ. տօ-
րոն Բոլշոյ պր. № 56—609, Յ.
Կ. Սետերս. 482 00—6
(Ե. հ. 2.)



Первокл. ресторакъ „АННОНА“

„Здание Артистического Общества“

Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час.
пополудни и вечеромъ отъ 10 час.
до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный ор-
кестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвйць—г-жи Сакко и Марія Оландезе и
баритона Джелларо Оландезе, подь управленіемъ САККО.**

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2
час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,
трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азиатская;
биллярды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

25—8



== Լոյս տեղաւ առանձին գրքով և վաճառում է ==

Ն Ա Ր-Դ Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գրքեր է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Դուստունըներգ» գրախա-
նութում, ուր և գրմում են գումարով գնողները:



Բ Ե Ս Տ Ո Ր Ե Ն - Ճ Ա Շ Ե Ր Ե Ն „ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան
բարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐԲԻՑ

— Եւրոպական և ասիական-կովկասեան նաշացուցակ —
Ընտիր ըմպելիներ, զով կարինետ-սենեակներ մաքուր խո-
հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—8





Իւրաքանչիւր իրի վրայ կպցւած է պատշաճ նշան, որը ապացուցում է նրա իսկութիւնը:

„Րամի“ անունով գործւած տրիկոն շինւած է բանջարի թելերից, որը բուսնում է Արեւելեան Ասիայում և ունի մետաքսի բոլոր յատկութիւնները: Այդպիսով նա գերազանցում է մինչև այժմ եղած

ԲՈԼՈՐ „ՐԱՄԻ“ ԳՈՐԾԻԱԾ

ՏՐԻԿՕՆԵՐԻՑ

և ամուր է, փափուկ և, որ զլիւարն է, չափազանց ճկուն, նրա թափանցկոտութիւնը ննարատրութիւն է տալիս մարմնին օդ շնչելու և աւելի անողջապահիկ լինելու:

„ՐԱՄԻ“ գործւածքը:

Ննարատրութիւն է տալիս քրտինքի մաքրելուն, որից յետոյ, այդ կտորը գործածողները չենտանջւում ոչ շոգից, ոչ քրտինքից և ոչ զլ ցուրտ են զգում:

ԱՅՆՊԻՍՈՎ ՆԱ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՅՐՏԻՑ ՊԱՇՏՊԱՆԻԵԼՈՒ ՄԻ ՄԻՉՈՑ

Շնորհիւ իր ամրութեան, այդ գործւածքը ամենից աւելի լաւ կերպով է պահպանում մարմնի մորթը մթնոլորտային պատահարներից: Եւ այդպէս նա կանոնաւորում է կաշւի գործունէութիւնը և ամրացնում է նրան:

„Րամի“ անունով ԲԱՆՉԱՐԻ ԹԵԼԵՐԸ

իրենց երկարութեամբ և ամրութեամբ գերազանցում են բոլոր բոյսերի թելերից:

„ՐԱՄԻ“ անուկով գործւածքը

իր բոլոր յատկութիւնների հետ միասին ՉԱՓԱՉԱՆՑ ԱՄՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ:

Նա ունի մետաքսի տեսք, շատ հարթ է, զեղեցիկ կերպով մաքրւում է և մաքրելու ժամանակ բոլորովին չի թուլանում կամ ծուռաւում:

„ՐԱՄԻ“ անուկով գործւածքը

իր բոլոր յատկութիւններով առանձին տեսակի հմայք ունի՝ ամեն ձևի սպորտի համար:

„ՐԱՄԻ“ գործւածքի մասին կարծիքներ են յայտնել առողջապահութեան պրոֆեսսորներ՝ բժ. Պետենկոֆեր, բժ. Բուխներ, որը իր քննութեան ժամանակ տեսել է. եւ առաջնութիւն եմ տալիս „ՐԱՄԻ“ գործւածքին: „ՐԱՄԻ“ գործւածքը շատ առողջապահական է և մարմնի մորթի կանոնաւորութեան համար միանգամայն զովելի:

„ՐԱՄԻ“ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԵՆ

Ե Ղ Բ. Ա. ԵՒ Ե Ա. Ա Լ Ը Ի Ա Ն Գ Ն Ե Ր Ի

ՄՈՍԿՒԱՅԻ ԱՌԵՒՅԲԱԿԱՆ ՏՈՒՆԸ:

Բաժանմունքներն կան. Մոսկւա, Կիև, Օդեսսա, Խարկով, Ռուսով Գ/վ, Եկատերինուրա, Ելիսաւեոպոլ, Կիւիւն, Մինսկ, Ռիգա, Սևաստոպոլ և

ԹԻՖԼԻՍ, որ գտնւում է Дворцовая ул., телеф. 477.

0—1

ՅՈՒՐԻՍԿՈՆԻՆԻ
ՃՈՑՊԱՐԿՈՅՆ

Հ Ա Ն Դ Ե Ր Զ Ե Ա Լ Ա Շ Խ Ա Ր Հ Ո Ի Մ

Ձերդ բեհեղեղուրեան մեծափայլանանափայլատաղուրթիւն, այս մարդը, որ այն աղետաբեկ նոր է եկել Քիֆլիսեցի հայ կաթողիկէ է. սակայն Քարել քն լատինները—հիմի սրան որսնդ տաննէք. ինչ բաժնում սպասեցնէ՞ք մինչև անիդ դատաստանի օրը:

—Ո՛հ մի. դուրս արձք դրան և դրանց նմաներին այտաղից. ինչպէս կարելի է այդպիսի Լքուրթիւն անել—հայ կաթողիկէն՝ հայ կաթողիկէները պիտ Քարէն և ոչ թէ լատինները:

—Այս ջան, հոգուդ մոռնիմ, էս մէկը բախշէ իս խօմ ջիւմ էլ իմացի Քարուճս, անիծած ու Լքիացած նասէրնիկներս այդ օրինը բերին գլխիս:

—Ա՛յ փչանան էդ տեսակ նասէրնիկները, որ իրենց մոռնիկներին տանջում են ու մեր գործերը դժ- արացնում ին. մուռտառ հարամգարէքը... փչանալուքը:



Գ. Ա. Ա. 1911